Արձանագրություն N 7

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-37 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան **« 01» «06» 2026թ. Ժամը 11:00**

Մասնակցում էին՝

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի պետի պարտականությունները կատարող Ի. Սաֆարյան-հանձնաժողովի նախագահ,

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Ստեփանյան-գնահատող անդամ,

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Ավդալյան-գնահատող անդամ,

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Է. Մնացականյան գնահատող հանձնաժողովի քարտուղար

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար ջեռուցման սարքերի գազի և էլեկտրական ջեռուցման կաթսաների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-37** ծածկագրով գնահատման նիստը կասեցվել էր և «Ամուրա» ՍՊԸ-ին առաջարկվել էր 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից շտկված հայտը ներկայացվել է ժամանակին ու գնահատվում է բավարար:

1. **Տվյալներ՝ շտկված հայտի ուսումնասիրման և գնահատման մասին.**

Հանձնաժողովի կողմից 25. 05. 2026թ-ին որոշում էր կայացվել կասեցնելու գնահատման նիստը՝ ներկայացված շտկված հայտի ուսումնասիրման և գնահատման համար:

Այնուհետև գնահատող հանձնաժողովի գնահատման նիստը շարունակվել է 01. 06. 2026թ-ին ժամը 11:00-ին: «Ամուրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվում է բավարար՝ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով, իսկ 2-րդ չափաբաժնի մասով գնահատվում է անբավարար ու մերժվում է, քանի որ մասնակցի կողմից առաջարկվող MIDEA L1PB36-C28WM ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-37** ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող հետևյալ պայմաններին՝

1. հզորությանը ոչ պակաս 50Կվտ
2. նախատեսված ջեռուցող մակերեսը ոչ պակաս 500քմ
3. քաշը առնվազն 50 կգ:

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-37 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում, 2-րդ չափաբաժնի մասով, միջոցներ կձեռնարկվեն «Ամուրա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացնելու լիազոր մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ 2-րդ չափաբաժինը հայտարարվում է չկայացած:

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-37 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել 1-ին չափաբաժնի մասով՝ «ԱՐՍՍՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, իսկ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով՝ «Ամուրա» ՍՊԸ-ին:

Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

Անգործության ժամկետի ավարտից հետո «ԱՐՍՍՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին և «Ամուրա» ՍՊԸ-ին կառաջարկվի կնքել պայմանագրեր:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Սաֆարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Ստեփանյան

Կ. Ավդալյան

Քարտուղար՝ Է. Մնացականյան